Փաստաբանի վերապատրաստման ինստիտուտ
Ինչի՞ համար է կարևոր փաստաբանի վերապատրաստումը

Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեությունը, ոլորտին վերաբերող իրավահարաբերությունները կարգավորող առաջին՝ «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքը, ընդունվել է 1998թ-ին: Ըստ այդմ՝ փաստաբան էր համարվում այն անձը, ով ***«սույն օրենքով սահմանված կարգով ստացել է փաստաբանական գործունեություն իրականացնելու արտոնագիր»:*** Իսկ փաստաբանական գործունեության արտոնագիր կարող էր ստանալ այն անձը, որն ուներ բարձրագույն իրավաբանական կրթություն, ինչպես նաև հանձնել էր որակավորման քննություն և ստացել համապատասխան վկայագիր:

2004թ. ՀՀ Ազգային ժողովն ընդունեց նոր՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը, որն ուժի մեջ մտավ 2005թ. հունվարի 22-ին: Այդ օրենքում ավելացավ նաև փաստաբանի թեկնածուին առաջադրվող առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժի մասին պարտադիր պայմանը, ինչը հետագայում հանվեց:

Այժմ գրեթե նույն պայմաններով են փաստաբանական արտոնագիր ստանում Ռուսաստանի Դաշնությունում և հետխորհրդային մի շարք երկրներում, ինչպիսիք են՝ Բելառուսը, Ուկրաինան, Ուզբեկստանը, Ղազախստանը: Օրինակ, Ռուսաստանում պարտադիր պայման է նաև փաստաբանի թեկնածուի ՌԴ քաղաքացի լինելը:

ԱՄՆ-ում չկա փաստաբանների ֆունկցիոնալ բաժանում, ինչպես Անգլիայում է: Սակայն այս երկու երկրներին միավորում է այն, որ փաստաբաններն օժտված են լայն լիազորություններով: Բացի դատարանում ներկայացուցիչ, պաշտպան լինելը և մարդկանց խորհրդատվություն տրամադրելը այս երկու երկրների փաստաբանները կարող են զբաղվել նաև հետաքննական գործունեությամբ, լինել «պատժիչ» և այլ պետական մարմինների ներկայացուցիչներ, ինչպես նաև զբաղվել նոտարական գործունեությամբ:

Փաստաբանն իրավաբան է, սակայն ոչ բոլոր իրավաբանները կարող են տիրապետել փաստաբանական հմտություններին, պաշտպանել իրենց վստահորդի շահերն ու իրավունքները: Մասնագիտություն ընտրելիս հաճախ մարդիկ առաջնորդվում են մասնագիտության հեղինակությամբ՝ հաշվի չառնելով իրենց կարողություններն ու հետագայում այդ ոլորտում աշխատանքի յուրահատկությունները:

Հայաստանում փաստաբանը, լինելով իրավաբանական օգնություն ստացողի հետապնդած շահերի իրականացումը օրենքով չարգելված միջոցներով և եղանակներով պաշտպանող ֆիզիկական անձ, իր գիտելիքները կատարելագործելու, համապատասխան հաստատություններում վերապատրաստվելու օրենքով որևէ պարտավորություն սկզբնական շրջանում չէր

կրում, ինչը կարող էր չարդարացնել այն նպատակները, որը դրված էր նրա առջև: «Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքում նշված էր ընդամենը մեկ հոդված, ըստ որի՝ փաստաբանների միությունների նպատակների և խնդիրների մեջ է մտնում իրենց անդամների ուսուցումը և վերապատրաստումը կազմակերպելը[1]: Պարզ է, որ այս նորմը չէր կարող կարգավորել ու կանխատեսել այն մեծ փունջ խնդիրները, որոնք կարող էին առաջ գալ թերի գիտելիքներով, կամ ժամանակակից իրավական համակարգին չտիրապետող փաստաբանական գործունեության արդյունքում:

«Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենքում սա միակ բացը չէր և հասունացել էր ժամանակակից պահանջներով նոր օրենք ունենալու պահը: Նոր կարգավորումներով գործող օրենքում փաստաբանին առնչվող պահանջները և նպատակները գրեթե ամբողջովին փոխվել են, ավելացել են իրավական գիտելիքները հարստացնելու, նոր հմտություններ ձեռք բերելու պահանջները: ՀՀ փաստաբանների պալատը ևս առաջնային տեղ է տալիս փորձի փոխանակմանը ու վերապատրաստումներին:

Եթե նախկինում փաստաբան դառնալու համար բավարար էր իրավաբանի դիպլոմ ունենալն ու ոչ ամբողջ ծավալով գիտելիքները ստուգող որակավորման քննությունը հանձնելը, ապա այժմ պահանջներն այլ են: Փաստաբան դառնալու հավակնություններ ունեցող իրավաբանը նախ պետք է ուսում ստանա ՀՀ փաստաբանական դպրոցում, որն էլ իրականացվում է երկու փուլով՝ տեսական ուսուցում և գործնական ուսուցում (փորձաշրջան): Ուսուցման ընդհանուր տևողությունը չի կարող վեց ամսից պակաս լինել[2]: Դպրոցն ավարտելուց և որակավորման քննությունները դրական հանձնելուց հետո հավակնորդը նոր միայն կարող է ստանալ փաստաբանական գործունեությամբ զբաղվելու արտոնագիր:

Բայց նույնիսկ փաստաբանական դպրոցն ավարտելն ու արտոնագիր ստանալն երաշխիք չի տալիս, որ փաստաբանն ինքնուրույն կկատարելագործի իր իրավական գիտելիքներն ու հմտությունները, կբարձրացնի մասնագիտական պատրաստվածությունը, կհետևի էթիկայի նորմերին, ինչպես դատարանում, նախաքննական մարմիններում, այնպես էլ իր հաճախորդների հետ հարաբերություններում: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև դրա հիման վրա ընդունված իրավական ակտերով նախատեսված են դրույթներ, որոնք պարտավորեցնում են փաստաբանին տարին առնվազն 24 ժամ անցնել վերապատրաստման դասընթացներ, ինչը չանելը կարող է վերջինիս նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմք հանդիսանալ: Ավելին, փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի ցանկում նշվում է նաև *«լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելը»*:

---

[1] *«Փաստաբանական գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդված 24*

[2] *«Փաստաբանության մասին» ՀՀ օրենք, հոդված 45.8*

Գիտելիքների և փորձի հարստացման խրախուսման պրակտիկան ամբողջ աշխարհում է լայն թափ ստանում: «Փաստաբանության մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքը ևս սահմանում է, որ փաստաբանը պարտավոր է անընդհատ կատարելագործել իր գիտելիքները և բարելավել հմտությունները (հոդված 7): Այս երկրում փաստաբանների պատրաստման և վերապատրաստման մեթոդաբանությունը միասնական է:

ՌԴ փաստաբանների ֆեդերալական պալատը կազմակերպում է որակավորման բարձրացման դասընթացներ, թրեյնիգներ, վերապատրսատման դասընթացներ, սեմինարներ, ասենք՝ դատական բանավեճի, քրեական վարույթի, մասնագիտական հոգեբանության և այլ տարբեր թեմաներով, որոնց մասնակցելը պարտադիր բնույթ չի կրում[3]:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 05.02.2014թ. 3/6-Լ որոշմամբ հաստատվել է «Փաստաբանների վերապատրաստման դասընթացներ անցնելու ժամաքանակը և կարգը»:

Փաստաբանների վերապատրաստում կարող է իրականացվել ՀՀ փաստաբանական դպրոցի կողմից՝ փաստաբանի հետ համապատասխան պայմանագիր կնքելու միջոցով, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված այլ կազմակերպությունների կողմից:

Փաստաբանների վերապատրաստման դասընթացները կազմակերպվում են խմբերով, բացառությամբ հեռավար ձևով իրականացվող վերապատրաստման: Իսկ հեռավար ձևով վերապատրաստմանը կարող են մասնակցել միայն՝ Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի վարչական տարածքներում գրանցված և գործունեություն ծավալող փաստաբանները, այլ պետությունում գտնվող փաստաբանները, ինչպես նաև տեղաշարժման սահմանափակումներով պայմանավորված առողջական խնդիրներ ունեցող փաստաբանները, որոնց վերաբերյալ թույլտվություն տրվում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ:

ՀՀ փաստաբանների պալատը փաստաբանների վերապատրաստումն իրականացնում է անվճար՝ բացառությամբ որոշ դեպքերի: Վերապատրաստման համար գրանցված, սակայն վերապատրաստմանն անհարգելի պատճառով չներկայացած կամ չանցած փաստաբանը սպառում է այդ վերապատրաստման դասընթացի համար նախատեսված անվճար ժամերի չափով դասընթաց անցնելու իր հնարավորությունը: Այս դեպքում փաստաբանը այդ ժամերը պարտավոր է լրացնել իր հաշվին4:

Այլ է ԱՄՆ-ում: Այստեղ պարտադիր չէ, որ փաստաբանն անցնի հատուկ դասընթացներ, վերապատրաստվի, կամ նախնական փորձ ձեռք բերի այնպիսի

---

[3] http://www.fparf.ru/education/courses/931/

[4] Տես՝ կետ 23 http://advocates.am/images/palati_xorhrdi_voroshumner/Voroshum-xorh-3-6-karg-verapatrastum.pdf

խնդիրները կարգավորելու համար, որոնց հետ նախկինում չի առնչվել: Նոր-նոր փաստաբանների շարքերը համալրվածները պետք է այնքան կոմպետենտ լինեն, որքան փորձառուները: Մի շարք կարևոր իրավական հմտությունները, ինչպես օրինակ՝ դեպքի վերլուծությունը, վկայության գնահատումը և իրավական պատրաստվածությունը անհրաժեշտ են ցանկացած իրավական խնդիրները կարգավորելիս:

Ինչպես ԱՄՆ-ում, այնպես էլ վերը թվարկված բոլոր երկրների ընդհանուր առանձնահատկությունն այն է, որ գործող փաստաբանական ազգային ասոցիացիաները, կազմակերպությունները չեն միջամտում փաստաբանի մասնագիտական գործունեությանը: Նրանց հիմնական նպատակը փաստաբանների աշխատանքին աջակցելը, դրան խթանելն ու անհրաժեշտության դեպքում մեթոդաբանակ օգնության ցուցաբերելն է, որոնց թվում են նաև տարաբնույթ դասընթացների, թրեյնիգների պատրաստումը: Գոյություն ունեն նաև փաստաբանների վերապատրաստման վճարովի դասընթացներ: Հաճախ կազմակերվում են տարբեր երկրների փաստաբանների հանդիպումներ՝ փորձի փոխանակման նպատակով:

Գրիշա Բալասանյան
ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհուրդ